Հովհաննես Թումանյան

Մեր ազգային վիպասան Պերճ Պռոշյանցին՝ իր քառասնամյակին

Այնտեղ ծնված ու մեծացած,
Ուր դարեվոր վըշտերն հայի
Ծանր ու մռայլ կան լեռնացած,
Ինչպես Մասիսն այն վիթխարի:

Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ
Ազգի վերքերն ողբերգողին,
Քառսուն տարի ձեռքիդ գըրիչ,
Անցար, բռնած նորա ուղին:

Հայ գյուղացին ցավեր ուներ

Խեղդված իրան խուլ խրճիթում,
Այն ցավերին լեզու տըվիր
Ու խոսեցրիր ամեն սըրտում:

Այդ սրբազան գործի համար,
Այժմ ահա, ծեր օրերիդ,

Մենք գալիս ենք երախտապարտ
Պըսակ դընել ալիքներիդ:

Եվ թող ապրի անմահ փառքով,
Ով որ ցավը թույլ թըշվառի
Կարեկցության հզոր խոսքով

Դարձնում է ցավն իր աշխարհի:

1899